Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու Անահիտ Ալեքսանդրյանի 2024թ. մարտի 18-ից 22-ը Իտալիայի Հանրապետություն գործուղման վերաբերյալ**

1. <u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>

Անահիտ Ալեքսանդրյան

2. <u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>

Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու

3. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>

Իտալիայի Հանրապետություն (ք. Հռոմ)
2024թ. մարտի 18-ից 22-ը

4. <u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>

«Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիայի քարտուղարություն

5. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>

Մասնակցություն Ռոտերդամի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի երկրորդ հանդիպմանը:

6. <u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ</u>

«Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) երկրորդ հանդիպումը, որին ես մասնակցել եմ որպես Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի կողմից Կոմիտեի անդամ, տեղի ունեցավ 2024 թվականի մարտի 19-ից 21-ը ՖԱՕ-ի կենտրոնակայանում (Հռոմ, Իտալիա):

Կոմիտեի քննարկմանը ներկայացվել է Քարտուղարության գրությունը Բարբադոսի վերաբերյալ, որը, հանդիսանալով Կոնվենցիայի Կողմ, մինչև այսօր չի նշանակել իրավասու մարմիններ:

Կոմիտեին ներկայացվեց Ռոտերդամի կոնվենցիայի իրագործմանն ուղղված օրենքների, կանոնակարգերի, քաղաքականության, ընթացակարգերի և այլ միջոցների վերաբերյալ Քարտուղարության գրությունը, ինչպես նաև վերջնական կարգավորող որոշումների մասին ծանուցումներ:

Բացի այդ, Քարտուղարության կողմից ներկայացվել են վերջնական կարգավորող որոշումների մասին ծանուցումների վերաբերյալ նշումներ և Կողմերի համար հարցաշարի պատասխանների վերլուծություն՝ վերջնական կարգավորող որոշումների մասին ծանուցումների հետ կապված մարտահրավերները բացահայտելու նպատակով:

Հանդիպման մասնակիցներին ներկայացվել է Քարտուղարության գրությունը Կողմերի հետ տեղեկատվության փոխանակման բարելավման տարբերակների բացահայտման հետագա աշխատանքների վերաբերյալ:

Քննարկվել է Բազելի կոնվենցիայի իրականացմանն ու համապատասխանությանը նպաստող մեխանիզմը ղեկավարող կոմիտեի հետ համագործակցության ընդլայնման հարցը:

Քարտուղարությունը Կոմիտեին բանավոր զեկույց է ներկայացրել իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումների մասին, որոնք իրականացվել են Կոմիտեի առաջին հանդիպման որոշման համաձայն:

Կոմիտեն կոչ է արել Բարբադոսին նշանակել իր ազգային մարմինը՝ համաձայն Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին կետի, կամ կապ հաստատել Կոմիտեի հետ Քարտուղարության միջոցով, որպեսզի Կոմիտեն կարողանա բացահայտել մտահոգիչ հարցի փաստերն ու հիմնական պատճառները և աջակցել դրա լուծմանը:

Կոմիտեն Քարտուղարությունից պահանջել է ձեռնարկել հետևյալ գործողությունները Կողմերի համաժողովի տասներկուերորդ հանդիպմանը նախորդող միջնստաշրջանային ժամանակահատվածում.

- կապ հաստատել Կողմերի հետ, որոնք դեռ տեղեկատվություն չեն տրամադրել այն մասին, թե արդյոք նրանք ունեն Ռոտերդամի կոնվենցիան կիրարկող ազգային օրենսդրություն,

- մշակել հարցաթերթ՝ Կողմերից տեղեկություններ հավաքելու համար Ռոտերդամի կոնվենցիայի իրականացմանն ուղղված օրենքների, կանոնակարգերի, քաղաքականության, ընթացակարգերի և այլ միջոցների մասին, մասնավորապես՝ ներմուծման վերաբերյալ պատասխաններին, վերջնական կարգավորող որոշումների մասին ծանուցումներին, արտահանման մասին ծանուցումներին, Կոնվենցիայի շրջանակներում վտանգավոր քիմիական նյութերի միջազգային առևտուրը վերահսկելու ընթացակարգին վերաբերող դրույթների իրականացմանը:

Կոմիտեն նաև խնդրել է Քարտուղարությանը ռեսուրսների առկայության դեպքում կազմակերպել վեբինարներ կամ առցանց խորհրդատվություններ շահագրգիռ կողմերի հետ՝ բացահայտելու ներմուծման վերաբերյալ պատասխաններին, վերջնական կարգավորող որոշումների մասին ծանուցումներին, արտահանման մասին ծանուցումներին, Կոնվենցիայով ընդգրկված վտանգավոր քիմիական նյութերի միջազգային առևտուրը վերահսկելու ընթացակարգին, այդ թվում՝ արտահանողների կողմից ներմուծմանն արձագանքելու միջոցների պահպանումն ապահովելու համար և Քարտուղարությանը տեղեկատվության փոխանցումն ապահովելու ընթացակարգին վերաբերող դրույթների իրականացման հետ կապված խնդիրները:

Կոմիտեն Քարտուղարությանը խնդրել է Կոմիտեի անունից շարունակել կապ հաստատել Կողմերի հետ, որոնք դեռևս չեն ներկայացրել Կոնվենցիայի III Հավելվածում ներառված քիմիական նյութերից որևէ մեկի ներմուծման վերաբերյալ պատասխանները՝ մասնավորապես նշելով Կողմերին տրամադրվող օգնությունն ու խորհրդատվությունները, որոնք հասանելի են Կողմերին Քարտուղարության միջոցով՝ ներմուծման վերաբերյալ պատասխանների հետ կապված:

## 7. ԱՐԴՅՈՒՆՔԸ

Կոմիտեն համաձայնեց առաջարկել Կողմերի Համաժողովին իր տասներկուերորդ հանդիպման ժամանակ քննարկել որոշման ընդունումը.

- որ Քարտուղարության 2025-2028 թվականների տեխնիկական աջակցության ծրագիրը կշարունակի ներառել իրազեկման միջոցառումները և փորձի ու տեղեկատվության փոխանակումը՝ ռիսկերի գնահատման համար տեղեկատվության ինտեգրման նպատակով,
- կոչ անել ՅՈՒՆԵՊ-ին և ՖԱՕ-ին շարունակել ջանքերը՝ աջակցելու Կողմերին վերջնական կարգավորող որոշումներ մշակելու և ընդունելու և այդ վերջնական կարգավորող որոշումների մասին ծանուցումներ Քարտուղարություն ներկայացնելու գործում:

Իրավախորհրդատու՝ Անահիտ Ալեքսանդրյան